ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/80

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.06.2018թ. թիվ 03/26-3/10357-18 գրությամբ «Նարնիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2051 գրության հիման վրա, 08.06.2018թ. թիվ 03/26-3/10357-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Նարնիկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Նարնիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Նարնիկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացարել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/80 ընթացակարգի շրջանակներում 13.06.2018թ. ժամը 10:15-ին և 15.06.2018թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 15.06.2018թ. ժամը 11:40-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է իր կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում: Ընկերությունը 4 անգամ ուղարկել է համապատասխան շտկումները գնահատող հանձնաժողովին, այդ թվում նաև՝ 25.05.2018թ.:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2051 գրությամբ հայտնել է, որ 24.05.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով ընթացակարգի գնահատման արդյունքում պարզվել է, որ «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 33-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէր արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին հրավերով պահանջվող տեղեկությունները,

- Հավելված 6-ը ներկայացվել էր էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ Հավելված 6.1-ը ներկայացված էր առանց էլեկտրոնային ստորագրությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ

աշխատանաքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել «Նարնիկ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Սակայն «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված շտկված տարբերակում կրկին նշված չէր արտադրողի անվանումը և ապրանքային նշանը: Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ մասը որոշել է մերժել վերջինիս հայտը 37-րդ և 52-րդ չափաբաժինների մասով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/80 ընթացակարգի շրջանակներում 13.06.2018թ. ժամը 10:15-ին և 15.06.2018թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/80 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/80 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերանորոգման ծախսային նյութերի և պահեստամասերի (ծախսային նյութեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նարնիկ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.05.2018թ. «Նարնիկ» ՍՊԸ-ին ճանաչել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով, որին 17.05.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 33-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի, մասնավորապես՝ արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին հրավերով պահանջված տեղեկությունները նշված չեն.
- Հավելված 6-ը ներկայացվել է էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ Հավելված 6.1-ը ներկայացված է առանց էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և ***24.05.2018թ.*** Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.05.2018թ. կայացրած որոշմամբ «Նարնիկ» ՍՊԸ-ի հայտը 33-րդ չափաբաժնի մասով մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացված շտկված տարբերակում կրկին առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում կրկին նշված չէ արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին հրավերով պահանջվող տեղեկությունները:

5. «Նարնիկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «narnik82@gmail.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածք, համաձայն որի Ընկերությունը 25.05.2018թ. ժամը 15:04-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հավելված 6.1-ը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.06.2018թ. թիվ 03/26-3/10357-18 գրությունը, ՀՀ

պաշտպանության նախարարության 06.06.2018թ. թիվ ԴՎԱ/2051 գրությունը և կից փաստաթղթերը, «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ընկերության էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող

ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վերանորոգման ծախսային նյութերի և պահեստամասերի (ծախսային նյութեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նարնիկ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է առաջին զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.05.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.05.2018թ. որոշմամբ «Նարնիկ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով, որին 17.05.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի՝ ընթացակարգի հայտը

պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- 33-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը ներկայացված է թերի, մասնավորապես արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին հրավերով պահանջված տեղեկությունները նշված չեն.
- Հավելված 6-ը ներկայացվել է էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ Հավելված 6.1-ը ներկայացված է առանց էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվել է և ***24.05.2018թ.*** Ընկերությանը սահմանված կարգով ծանուցվել է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 30.05.2018թ. կայացրած որոշմամբ «Նարնիկ» ՍՊԸ-ի հայտը 33-րդ չափաբաժնի մասով մերժել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացված շտկված տարբերակում կրկին առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում կրկին նշված չէ արտադրողի անվանման և ապրանքային նշանի մասին հրավերով պահանջվող տեղեկությունները:

«Նարնիկ» ՍՊԸ-ն ՍՑ-ԱՄ-2018/80 ընթացակարգի քննության շրջանակներում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է «narnik82@gmail.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածք, համաձայն որի Ընկերությունը

25.05.2018թ. ժամը 15:04-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հավելված 6.1-ը: Ընկերությունը հայտնել է, որ ստանալով ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը Ընկերությունը 24.05.2018թ. փաստաթղթերը ուղարկելուց հետո ևս 3 անգամ ուղարկել է Հավելված 6.1 հավելվածի շտկված տարբերակը, այդ թվում նաև՝ 25.05.2018թ., քանի որ 24.05.2018թ. ուղարկված տարբերակում ևս եղել են թերություններ:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված «narnik82@gmail.com» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը 25.05.2018թ. ժամը 15:04-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկել է Հավելված 6.1-ը և այն համադրելով Ընկերության «narnik82@gmail.com» էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» բաժնում առկա նամակների հետ, արձանագրում եմ, որ Ընկերության վերոհիշյալ էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» արկղում բացակայում է 25.05.2018թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի «a.baghramyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկված Ընկերության կողմից մատնանշված էլեկտրոնային նամակը: Միևնույն ժամանակ վերոնշյալ նամակների ուսումնասիրությունից պարզվել է, որ նամակները գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ուղարկվել են Կարգով սահմանված ժամկետից ուշ՝ 26.05.2018թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Նարնիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև «Նարնիկ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստում առկա տեղեկատվությունը, գտնում եմ, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված

ժամկետում չի շտկել ներկայացված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված լիազորված մարմին, «Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ տարաբնույթ ընկալվող դրույթների վերաբերյալ» 09.10.2017թ. թիվ Պ-2 պաշտոնական պարզաբանման մեջ նշել է, որ եթե գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն և մասնակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկում անհամապատասխանությունը, ապա, անկախ նշված ժամկետից հետո այդ անհամապատասխանությունը շտկելու հանգամանքից, պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընդ որում, այս դեպքում, նկատի ունենալով, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը չի բավարարում հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, իսկ ապրանքների գնման դեպքում նաև Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, ուստի այդ հանգամանքը դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչի արդյունքում դադարեցվում է այդ մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին և մասնակիցը ներառվում է ցուցակում:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Նարնիկ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-4/8» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.06.2018թ. թիվ 03/26-3/10357-18 գրությամբ «Նարնիկ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00888893) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Նարնիկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**